Հօրդ սուրբ աջը՝ շնորհաւորում ենք Ձեր նոր տարին՝ յանկանայով Ձեզ երկար և յաջողակ կեանք յօգուտ Եկեղեցւոյ և Հայ ազգի, և միանգամայն յանձնելով զմեզ Աստուածահաճոյ աղօթից և օրհնութեան Ձերոյ։

Մնամ խոնարհ որդի Սրբազան Հօրդ

ԵՆՈՎՔ ԲՈՒԴԱՂԵԱՆ

յ31 դեկտ. 1887 թ.

Բաղու

Պարոն Ենովքի գրութիւնն կարդալով՝ ուղարկեցի Բաղու մեր պարոն Ատենադպիր Աբրահամ բէկ Զահվերդեանցին խորհրդակցելու Բուդաղեան յարգոյ եղբարց հետ, որին և յանձնեցի հետեւեալ գրութիւնս՝ գրած ի 15 յունվարի 1888 ամի. հմ. 23։

,, Մեծապատիւ պարոն Ենովք Բուդաղեանց.

,, Քրիստոսական ողջունիւ և օրհնութեամբ յայտնեմ թէ յ31 դեկտ. անցելոյ գրած մխիթարական նամակդ կարդալով՝ ամենայն ուշադրութեամբ և սիրով՝ յանչափս ուրախացայ, նամակագրիդ ազգասիրական ազնիւ սիրտն ու հոգին ճանաչելով գրուածոց բովանդակութիւնից, քանզի գրուած է։ «Այր ի նամակէ իւրմէ ճանաչի»։

,, Սաղիանի վանքի վանական դպրոցի գոյութիւնը և յարատեւ պահպանութիւնը Ձեր բարեպաշտական ջերմեռանդութիւնից կախում ունի և իրաւամբ փառք ու պատիւը կմնայ յաւիտեան Բուդաղեանց ազնիւ ազգատոհմին։

,, Ոբքան քաղցր էր ինձ կարդալ Ձեր պատուական նամակի մէջ այն բաւականացուցիչ խօսքերը թէ «արդէն մենք մեր սեպհականութիւնից ուխտել ենք նիւթապէս ապահովել նոյն վանքում բացուելի վանական ուսումնարանը, Եւն։

,, Գործը կատարեալ ածելու համար վանական դպրոցի կանոնագրութիւնն՝ համաձայն խոսամանս և Ձեր ցանկութեան՝ ուղարկեցի մեր պ Ատենադպիր Աբրահամ բէկի ձեռքն, որին և յանձնեցի յատկապէս բան առ բան խօսիլ Ձեր սիրելութեան